ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հուլիսի 2022 թվականի N: 410 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ, ԱԽՈՒՐԻԿ, ԱՌԱՓԻ, ԳԵՏՔ, ԲԱՅԱՆԴՈՒՐ, ԲԵՆԻԱՄԻՆ, ԵՐԱԶԳԱՎՈՐՍ, ՀԱՅԿԱՎԱՆ, ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ՈՒ ՈՍԿԵՀԱՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ «ՇԻՐԱԿ-4» ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի № 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 16-ի № 2-20 եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի № 124-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի № 76-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և Ախուրյան համայնքի Ազատան, Ախուրիկ, Առափի, Գետք, Բայանդուր, Բենիամին, Երազգավորս, Հայկավան, Ղարիբջանյան ու Ոսկեհասկ բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Շիրակ-4» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ՝ճիշտ է